Հավելված N1

Երևանի քաղաքապետի

<<--->> ---------2011թ.

N-------Ա որոշման

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ (ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ) ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՅԼ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Երևանի ենթակայության կազմակերպություններին հատկացվող նվիրաբերության, նվիրատվության և անշահախնդիր (բարեգործական) նպատակներով այլ աջակցության ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) համակարգման, հաշվառման և վերահսկման գործընթացը:

2. Սահմանել, որ Երևանի ենթակայության կազմակերպություններին սույն կարգի շրջանակներում կարող են հատկացվել դրամական նվիրաբերություններ և նվիրատվություններ, անհատույց մատուցված ծառայություններ և աշխատանքներ, ինչպես նաև բնաիրային՝ ապրանքանյութական արժեքների տեսքով հատկացումներ (բացառությամբ սննդամթերքի) միայն պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգությունն ապահովելու, իսկ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքների և ծառայությունների համար՝ նաև համապատասխան սերտիֆիկատների և հայտարարագրերի առկայության դեպքում:

II. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Երևանի ենթակայության կազմակերպությունը (այսուհետ՝ Պատասխանատու) Ծրագրի վերաբերյալ առաջարկներ (բացառությամբ դրամական նվիրատվությունների) ստանալուց հետո 2-օրյա ժամկետում դրա մասին, համապատասխան եզրակացություն և համաձայնություն ստանալու նպատակով, գրավոր դիմում է համակարգող Երևանի քաղաքապետի տեղակալին, Երևանի վարչական շրջանների ղեկավարին, Երևանի քաղաքապետի խորհրդականին (այսուհետ՝ Համակարգող):

4. Համակարգողը գրավոր դիմումը ստանալուց, քննարկելուց և ուսումնասիրելուց հետո մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ Ծրագրերի վերաբերյալ տալիս է իր եզրակացությունը, իսկ մեկ միլիոն դրամ և ավելի արժողությամբ Ծրագրերի դեպքում դրանց վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, իսկ անհրաժեշտության դեպքում համաձայնություն է ստանում վարչությունից։

5. Ծրագիրը չընդունվելու (ոչ նպատակահարմար համարելու) դեպքում Համակարգողը 2-օրյա ժամկետում մերժման վերաբերյալ եզրակացությունը գրավոր ուղարկում է Պատասխանատուին՝ դիմողին տեղեկացնելու նպատակով։

6. Ծրագրի իրականացման վերաբերյալ դրական կարծիքի դեպքում Համակարգողը ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորվածության, նպատակահարմարության և արդյունավետության վերաբերյալ եզրակացության մեկ օրինակը 2-օրյա ժամկետում ուղղարկում է այն ներկայացնող Պատասխանատուին, իսկ մեկ օրինակը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու նպատակով։

7. Պատասխանատուն Համակարգողից դրական եզրակացություն ստանալուց հետո դիմողին տեղեկացնում է պայմանագիր կնքելու պատրաստակամության վերաբերյալ և կնքում է Ծրագրի իրականացման մասին պայմանագիր, որի մեկ օրինակը ներկայացնում է Համակարգողին, իսկ պատճենը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն։

III. ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

7. Ծրագրի հաշվառումն իրականացնում է Պատասխանատուն։

8. Ծրագրի վերահսկողությունն իրականացնում են Համակարգողը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը։

9. Ծրագրի թափանցիկությունը և վերահսկողությունն ապահովելու նպատակով Պատասխանատուն իրականացնում է Ծրագրի արտացոլումը հաշվապահական հաշվառման մեջ համաձայն N 2 հավելվածի և յուրաքանչյուր ամիս մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը Համակարգողին և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությանն է ներկայացնում հաշվետվություն Ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի, համապատասխան հիմնավորումներով՝ կցելով կատարողական արձանագրություններ, հաշիվ ապրանքագրեր, հանձնման-ընդունման ակտեր և այլն։

10. Սահմանել, որ Ծրագրով դրամական միջոցների նվիրատվության դեպքում դրանք ստացվում են կանխիկ (մուտքագրելով դրամարկղ) կամ անկանխիկ (փոխանցելով բանկային հաշվին) եղանակներով, իսկ դրամական նվիրաբերությունների դեպքում կազմակերպության կողմից դրանց առանձնացված հաշվառումն իրականացնելու համար բացվում է առանձին բանկային հաշիվ։

11. Համակարգողը ներկայացված հաշվետվություններն ամփոփում և մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը եռամսյակային կտրվածքով իրականացվող Ծրագրերի բովանդակային նպատակահարմարության և դրանց արդյունավետության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է Երևանի քաղաքապետին։

12. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը ներկայացված հաշվետվություններն ամփոփում և արդյունքների մասին մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը եռամսյակային կտրվածքով

իրականացվող Ծրագրերի ֆինանսա-տնտեսական արդյունքների վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է Երևանի քաղաքապետին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N2
Երևանի քաղաքապետի
«-----» ----------2011թ.
N----------Ա որոշման

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ (ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ) ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՅԼ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ ԱՐՏԱՑՈՒԼԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Գործառնության բովանդակությունը	Դեբետ	Կրեդիտ
I	**Եկամուտներին վերաբերող շնորհներ**		
1	Եկամուտներին վերաբերող շնորհների ստացում		
1,1	դրամական միջոցների ստացում	251, 252	541
1,2	ապրանքանյութական արժեքների ստացում	211, 213	541
2	Եկամուտներին վերաբերող շնորհների վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	541	614, 631
3	Եկամուտներին վերաբերող շնորհների վերադարձում		
3,1	չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդի հաշվին	541	211, 213, 251, 252
3,2	չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը գերազանցող մասով	714	252
II	**Ակտիվներին վերաբերող շնորհներ**		
1	Ակտիվներին վերաբերող շնորհների ստացում	111, 113, 131	421
2	Ակտիվներին վերաբերող շնորհներից հետաձգված եկամուտների վերագրումը հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին	421	628
3	Ակտիվներին վերաբերող շնորհների վերադարձում		
3,1	չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդի հաշվին	421	111, 113, 131
3,2	չմարված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը գերազանցող մասով	729	252
III	**Անհատույց ստացված աշխատանքներ և ծառայություններ**		
1	Ստացված աշխատանքների և ծառայությունների ծախսագրում	714	521
2	Ստացված աշխատանքների և ծառայությունների գծով եկամուտի ճանաչում	521	614

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N3
Երևանի քաղաքապետի
«-----» ----------2011թ.
N---------Ա որոշման
Ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ (ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ) ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՅԼ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(կազմակերպության անվանումը)

առ 01.--.201-թ.
(հաշվետու ժամանակաշրջան)

հազ.դրամ

հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը	Ծրագրի նկարագիրը* Աշխատանքների, մատուցված ծառայությունների և (կամ) ստացված ապրանքների անվանումը	Ամբողջ Ծրագրի իրականացման ժամանակահատվածը		Չափի միավոր	Ըստ Ծրագրի՝ հաշվետու ժամանակաշրջանի համար		Հաշվետու ժամանակաշրջանի համար փաստացի կատարված		Տարբերություն		Ծանոթություն
			սկիզբ	ավարտ		Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	Քանակ	Արժեք	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

* Դրամական նվիրատվության դեպքում 3-րդ սյունակը չի լրացվում
* Ապրանքների դեպքում 3-րդ սյունակը լրացվում է յուրաքանչյուր ապրանքատեսակն ըստ առանձին անվանումների
* Ձևին կցվում է կատարվող աշխատանքի և (կամ) մատուցվող ծառայության նախահաշիվը

Ծանոթություն՝ աղյուսակի 4-13 սյունակները լրացվում են տվյալների առկայության դեպքում

ՏՆՕՐԵՆ՝ _____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կ.Տ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ